ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վարդան Մանուչարյանի 2025 թվականի մարտի 14-ի, 17-ի, 20-ի և ապրիլի 7-ի թվով 6 զեկուցագրերը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 1200000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Բնունիս, Աշոտավան, Ույծ բնակավայրերի և Սիսիան քաղաքի թվով տաս խաղահրապարակների և պուրակների տարածքների բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:
2. 1800000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի մշակույթի տան առաջին հարկի կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:
3. 300000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի մշակույթի տան շենքի տեխնիկական վիճակի մասին եզրակացություն ծառայության ձեռքբերման համար:
4. 2300000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան քաղաքի Որոտան կինոթատրոնի դիմացի հատվածի կապիտալ բարեկարգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:
5. 1500000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան քաղաքի Վուրգ Ոսկանյանի անվան հուշարձանի հարակից տարածքում ցայտաղբյուրի և սանհանգույցի կառուցման, Իսրայելյան փողոցի, ֆուտբոլի մարզադաշտի և Մայիսի 28 այգու հարակից տարածքներում գտնվող սանհանգույցների վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:
6. 880000 ՀՀ դրամ տեղափոխել 09.5.1 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան քաղաքի Չարենցի 5 հասցեում գտնվող մարզադպրոցի տարածքի բարեկարգման և արտաքին հարդարման աշխատանքների նախագծանախահաշվային և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /իրավաբան/ Սուսաննա Սահակյանի 2025 թվականի ապրիլի 9-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 8560000 ՀՀ դրամ տեղափոխել 01.1.1 ծրագիր 4241 հոդված՝ իրավաբանական ծառայություններ ձեռքբերելու համար /թվով 8 դատական գործեր/:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի թիվ 034-Ա որոշումը, ինչպես նաև <<Սիսիան համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Արուս Գասպարյանի 2025 թվականի ապրիլի 2-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

2. 3397990 ՀՀ դրամ տեղափոխել 09.1.1 ծրագիր 4511 հոդված՝ <<Սիսիան համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի թիվ 034-Ա որոշումը, ինչպես նաև <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի 2025 թվականի մարտի 19-ի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 960000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ին տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիան համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի թիվ 034-Ա որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 09.1.1 ծրագիր 4251 հոդվածից 63000000 ՀՀ դրամ և 09.5.1 ծրագիր 4251 հոդվածից 18263000 ՀՀ դրամ գումարները ընդամենը

81263000 ՀՀ դրամ տեղափոխել 04.5.1 ծրագիր 4511 հոդված՝ «Սիսիան համայնքի տրանսպորտ» ՀՈԱԿ-ին հաստիքացուցակով նախատեսվող սուբսիդիայի գումարը տրամադրելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության եվ սոցիալական հարցերի բաժնի պետ Ն. Հովհաննիսյանի 2025 թվականի ապրիլի 7-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 4000000 ՀՀ դրամ տեղափոխել 08.1.1 ծրագիր 4727 հոդված՝ Սպորտային և օլիմպիական բազմաթիվ հաջողություններ արձանագրած մարզիկներին Հայաստանի Հանրապետությունից դուրս մարզական միջոցառումներին մասնակցելու դեպքում դրամական աջակցություն և պարգևատրում տրամադրելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջև կնքված ընթացիկ սուբվենցիա տրամադրելու մասին թիվ ՍՄԸՍՀ-04 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարի պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. <<Է. Ասյանի անվան Սիսիանի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ –ին ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում իրականացնելու համար նախատեսվում է 09.5.1 ծրագիր 4511 հոդվածում ավելացնել 1743100 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ, որն տրամադվում է պետության կողմից և պլանավորվում է նաև վարչական բյուջեի ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) եկամտային մասում:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի եկամուտներն ավելացնել 3600000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որպես ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԻՄ-Ի ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Վերոնշյալ 3600000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամից ավելացնել 11.1.2 (ՀՀ համայնքների բյուջեի պահուստային ֆոնդ) ծրագրի 4891 հոդվածին և պլանավորվում է վարչական բյուջեի / ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԻՄ-Ի ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ / եկամտային մասում:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի և ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջև 2025 թվականի մարտի 3-ի կնքված դրամաշնորհի թիվ ՍՄ-ԴՄՀ-03/25 պայմանագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

1. Սիսիան համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան 249 (երկու հարյուր քառասունինը) երեխաների նախադպրոցական կրթության ապահովման համար, որից՝ 4.584.047 ՀՀ դրամ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմաններով վկայագրված 14 երեխաների համար (համաձայն հավելված N1-ի) և 83.200.700 ՀՀ դրամ զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի 235 երեխաների համար նախատեսվում է 09.1.1 ծրագիր 4511 հոդվածում ավելացնել 87784747 (ութսունյոթ միլիոն յոթ հարյուր ութսունչորս

հազար յոթ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև վարչական բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում, որից հետո ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների և Սիսիան համայնքի միջև կնքված սուբսիդիայի տրամադրման պայմանագրերում կկատարվեն համապատասխան ձևակերպումները՝ փոփոխությունները:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

10.04.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 93127847 (իննսուներեք միլիոն մեկ հարյուր քսանյոթ հազար ութ հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

10.04.2025թ.